ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1240-ԱԿԱՆ ԹԹ.

ԹԻՆՈՅԱՆ Դ. Ֆ.

Հեթում Առաջինի՝ մոնղոլական կայսրության հետ ունեցած փոխհարաբերությունները և մասնավորապես նրա պատմական այցելությունը Կարակորում՝ Մոնղոլական կայսրության մայրաքաղաք, կարելի է իրավամբ համարել Հայոց պատմության կարևորագույն դրվագներից մեկը: Այն գալիս է ապացուցելու հայ դիվանագիտական մտքի ճկունության, քաղաքական նոր պայմաններին հարմարվելու ունակության մասին, ունակություն, որը հատուկ էր Հայոց պատմության առավելապես կիլիկյան շրջանին: Միևնույն ժամանակ այն բնորոշում է նաև հայկական դիվանագիտության՝ նվազագույն անզիջում լինելու առավելագույն արդյունքի հասնելու, ազգի ու պետության համար կենսական նշանակություն ունեցող հոգևոր ոլորտում անզիջում լինելու կարողությունը: Հեթում Առաջինը իրեն դրսևորեց ոչ միայն որպես պետության ղեկավար և ընդհանրապես հայկական քաղաքակրթության հովանավոր, այլ նաև համաքրիստոնեական քաղաքական պատասխանատու գործիչ: «..Ինչպես Բեյբարսը մի գլուխ բարձր էր բոլորից տասներեքերորդ դարի մահմեդականության միջավայրում, նույն կերպ Հեթումը, որը կարողացավ իր հաշիվների մեջ ընդգրկել ողջ Ասիան՝ Պեկինից մինչև Սեն-Ժան դ'Աքր, և մոնղոլական հսկայական հորձանուտի մեջ տեսնել Արևմուտքի փրկությունը, մի գլուխ բոլորից բարձր էր ժամանակի քրիստոնեության միջավայրում: Բայց ոչ ոք չհասկացավ նրա հանճարը…. Հեթում Ա թագավորը կմնա այն մարդը, որը եթե, Արևմուտքը լսեր իրեն, կարող էր շրջել համընդհանուր պատմության ընթացքը»[1]: Մոնղոլական արշավանքների հետևանքով առաջացած քրիստոնեություն-իսլամ բազմադարյան հակամարտության ծիրում ի հայտ եկավ այս նոր քաղաքակրթական՝ մոնղոլներին համաքրիստոնեական միջավայրում տարրալուծելու խնդիրը: XIII դ. 30-50-ական թթ., երբ Մերձավոր Արևելքում քրիստոնեական աշխարհը պարտություններ էր կրում իսլամադավան երկրների կողմից և կորցնում իր նախկին ազդեցության գոտիները, մոնղոլները սկսեցին դիտարկվել որպես «երկսայր սուր» իսլամի դեմ: Հարկավ, նույն մոնղոլական արշավանքները նկատելի բացասական ազդեցություն ունեցան արևելա-քրիստոնեական հանրույթների վրա թե Կովկասից հյուսիս և թե հարավ ընկած տարածքներում, սակայն Մերձավոր Արևելքում նրանք իրապես կարող էին իսլամի կատաղի հակառակորդ դառնալ, և նրանց հետ դաշինքը լիովին իմաստալից ու բնական էր դառնում: Խնդրի լուծմանը

---

[1] **Գրուսե Ռ.**, *Պատմություն խաչակրաց (տե՛ս* **Տեր Պետրոսյան Լ.**, *Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, էջ 323):*

ձեռնամուխ եղավ նաև Հռոմեական եկեղեցին, որին հետաքրքրում էր ոչ միայն մերձավորարևելյան, այլ նաև եվրոպական ուղղությունը, քանի որ մոնղոլները հասել էին կենտրոնական Եվրոպա և իրենց ներկայությամբ լուրջ սպառնալիք էին դարձել տարածաշրջանի քրիստոնեական երկրների համար: Իրենց հերթին, Հեթումը և ընդհանրապես Կիլիկիայի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները ևս լուծում էին մի քանի խնդիր: Առաջինը, հարկավ, հայոց թագավորության ֆիզիկական անվտանգության ապահովման և հնարավորության դեպքում իսլամական հարավին ու հյուսիսին դիմագրավելու հարցում դաշնակից ձեռք բերելու հնարավորությունն էր: Երկրորդն արդեն նվաճված Մեծ Հայքի հայության ֆիզիկական ու հոգևոր անվտանգության ապահովության հիմնահարցն էր: Ամենևին էլ պատահական չէր Հեթումի՝ «Ամենայն Հայոց թագավոր» տիտղոսը: Հաշվարկելով բոլոր հայերի աշխարհիկ տիրակալ, որի համար կիլիկյան թագավորները մեծ մասամբ իրավական որևէ հիմնավորում չունեին, այդուհանդերձ, «արևելյան հայերի» հանդեպ կիլիկյան քաղաքական վերնախավն ուներ որոշակի բարոյական պատասխանատվություն: Սհա այս խնդիրների լուծումն էլ Հեթումի գործունեությանը աստիճանաբար հաղորդեց համաքրիստոնեական նշանակություն: Ինչևէ, 1243 թ. Քյոսեդաղի (Չմանկատուկի) ճակատամարտում[2] Իկոնիայի սելջուկյան սուլթանի զորքերը ջախջախիչ պարտություն են կրում մոնղոլական զորաբանակից: Մոնղոլներն արդեն գտնվում էին Կիլիկիայի սահմանագլխին, և Հեթումն այլևս չէր կարող հապաղել: Նա որոշում է կայացնում մոնղոլների մոտ դեսպանություն ուղարկելու մասին. «Իբրեւ այս գործեցաւ (Քյոսեդաղի ճակատամարտը-Թ. Դ.), Հեթում արքայ, որ աշխարհին Կիլիկեցւոց և այնոցիկ նահանգաց իշխէր, յորժամ ետես, եթէ պարտեցաւ սուլտանն առաջի նոցա, առաքեաց առ նոսա դեսպանս և պատարագս արժանաւորս՝ դնել նոցա ընդ նմա ուիստ խաղաղութեան և նմա կալ նոցա ի հնազանդութեան»[3]: Սակայն Հեթումին բավական դժվարին փորձություն էր սպասվում այստեղ: Բանն այն է, որ ճակատամարտից որոշ ժամանակ առաջ Իկոնիայի սուլթան Ղիաս ադ Դինը իր ընտանիքին՝ կանանց, մորը և դստերին ապահովության նպատակով ի պահ էր տվել Հեթումին: Եվ ահա Բաչու նոյինը (մոնղոլական զորաբանակի հրամանատարը) հայոց թագավորից պահանջում է իրեն հանձնել սուլթանի ընտանիքի անդամներին: Թե ինչպիսի հոգեկան խնդիրների առջև է կանգնել արքան, երևում է Կիրակոս Գանձակեցու տողերից. «Եւ իբրև լուաւ արքայ Հեթում, յոյժ տրտմեցաւ եւ ասէ. «Լաւ էր ինձ եթէ զորդի իմ՝ զԼևոն, խնդրէալ էին յինէն, քան թէ զնոսա»…»: Իհարկե, Իկոնիայի սուլթանության հետ փոխհարաբերությունները ամենևին էլ դաշնակցային չէին: Բացի այն, որ Հեթումը հարկադրված էր եղել ընդունել

---

[2] *Այսպես է կոչվում ճակատամարտի դաշտին մոտ գտնվող Քյոսեդաղ լեռան կամ Չմանկատուկի՝ մոտակա գյուղի անվանումով:*

[3] **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք Օհանջանյանի, Ե., 1961, էջ 284-285:*

սելջուկների գերիշխանությունը, վերջիններս միշտ էլ ձգտում էին Դաշտային Կիլիկիայի միջոցով դուրս գալ Միջերկրական ծով, և Ռուբինյան-Հեթումյանների թագավորությունը ռազմավարական հակառակորդ էր Իկոնիայի համար: Դրան հավելենք այն, որ ամեն պատեհ հնարավորության դեպքում սելջուկները փորձում էին օժանդակել հակապետական ցանկացած դրսևորման, որ տեղ էր գտնում Կիլիկիայում: Այդ ամենին կարող էր գումարվել նաև հայոց թագավորի ցանկությունը՝ վերացնել իկոնիացիներից ունեցած ստորակարգային կախվածությունը: Այս բոլոր գործոնները հաշվի առնելով՝ արքան հարկադրված էր իրականացնել մոնղոլների պահանջը. սուլթանի ընտանիքը հանձնվեց մոնղոլներին: Դրա փոխարեն «...ուրախ եղեն և մեծարանոք յարգեցին զդեսպանսն արքայի, և կարգեցին նոցա ռոճիկս և երիվարաց նոցա... Հաստատեցին և սէր ընդ արքայի, ետուն և գիր ըստ դենին իւրեանց, զոր էլ տամղայն կոչէին»[4]: Սակայն, ինչպես ներկայացնում է ասորի հեղինակ Բարհեբրեուսը, սուլթանի ընտանիքի հանձնումը ամենևին էլ Հեթումի որոշումը չէր: Այս շրջանում փաստացի իշխանության զգալի մասը շարունակում էր մնալ Կոստանդին թագավորահոր ձեռքում, և վերջինս դեռ 1243 թ., այն է՝ Քյոսեդաղի ճակատամարտի նախօրէին մեկնում է Կեսարիա՝ իկոնիացիների արշավող զորքերի զորակայան և վերահաստատում հայոց արքայի՝ դաշնակցությանը հավատարիմ լինելը, ըստ ամենայնի, պայլը նաև զորք էր խոստացել սելջուկներին: Սակայն վերադառնալով՝ Կոստանդինը խոստումը չկատարեց: Կարճ ժամանակ անց տեղի ունեցած Քյոսեդաղի ճակատամարտից հետո էլ Կիլիկիայում ապաստան գտած սուլթանի ընտանիքը, արդեն Կոստանդինի հրամանով հանձնվում է մոնղոլներին: Հետաքրքիր է, որ Ղ. Ալիշանը նս սուլթանական ընտանիքի՝ մոնղոլներին հանձնելու փաստը, վերագրելով Կոստանդին թագավորահորը, այդուհանդերձ, որպես թվական է նշում 1237-ը: «Ալայէտտին առաքէ առ Հեթում՝ ի պահ զմայր իւր և զքոյր, զորս Կոստանդին պայլ մատնէ թաթարաց»[5]: Անվանի հետազոտողը այստեղ շփոթել է հանձնելու թվականը, քանի որ նշյալ թվականին հայոց արքունիքը չէր կարող իրեն նման քայլ թույլ տալ: Չժխտելով Կոստանդին պայլի ունեցած մեծ դերակատարումը երկրի կառավարման հարցում, այդուհանդերձ, կարող ենք ասել, որ պատմիչներն այդ արարքը վերագրել են նրան՝ նպատակ ունենալով «չսևացնել» հայոց թագավոր Հեթումի կերպարը: Այդ քայլը իրավամբ ողջունելի չէր, մանավանդ որ հանձնվել էր հայոց թագավորի գերակայի ընտանիքը, որի հանդեպ Հեթումն ուներ ստորակարգային պարտավորություններ: Այդ ամենը չէր տեղավորվում ասպետական այն պատկերացումների մեջ, որոնք քարոզվում էին խաչակիրների ու նաև հայ ազնվականության շրջանում: Ուստի կատարվածի բարոյական ողջ պատասխանատվությունը փաստացիորեն բարդվեց նվազ խոցելի,

---

[4] *Նույն տեղում, էջ 285:*

[5] **Ղևոնդ Ալիշան,** *Միսուան եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 554:*

կյանքի մայրամուտում գտնվող, իրավական առումով տիրող արքայատոհմի հետ չառնչվող Կոստանդին պայլի վրա: Ավելին, ըստ պատմիչ Բարհեբրեուսի, Կոստանդինը ինքն է տեղյակ պահել մոնղոլներին, որ սուլթանի ընտանիքը գտնվում է իր արքունիքում և պատրաստակամություն է հայտնել նրանց հանձնել մոնղոլներին: Ըստ ամենայնի, այս տեղեկությունը ճշմարիտ կարող է լինել: Բանն այն է, որ, ինչպես վերը նշվեց, Կոստանդինը վճռական ճակատամարտից առաջ մեկնել էր Կեսարիա և օժանդակություն էր խոստացել մոնղոլների դեմ պատերազմում: Հարկավ, դրա մասին մոնղոլները չէին կարող տեղեկացված չլինել: Ուստի Կոստանդնի արարքը նպատակ էր հետապնդում նաև չեզոքացնել մոնղոլների հնարավոր պատասխանը իկոնիացիների «դաշնակից» դիտարկվող հայոց թագավորության հանդեպ: Այդ քայլով հայոց թագավորահայրը կարողացավ դնել հայ-մոնղոլական դաշնակցային (անշուշտ, ստորակայական) փոխհարաբերությունների հիմքը, որը հայոց թագավորությանը հնարավորություն էր տալու կառուցելու իր տարածաշրջանային քաղաքականությունը հետագա ավելի քան կեսդարյա ժամանակահատվածի համար: Այդ շրջանի ռազմաքաղաքական գործիչ Սմբատ գունդստաբլը իրողությունը ներկայացնում է հետևյալ կերպ. «..Եւ թաթարն յղարկեց ի հետ ի Հեթում՝ թագաւոր թէ՝ տուր զփախստականդ. թէ չէ՝ քո ամեն սէրն որ մեզ դրիր նա սուտ է»[6]: Այստեղ կա մեկ կարևոր հանգամանք. հասկանալի է, որ Սմբատը չէր կարող խոսել իր հոր՝ Կոստանդնի՝ գերիներին մոնղոլներին վերադարձնելու առաջարկի մասին, բայց պարզ է դառնում, որ խորագետ պայլը դեռ Չմանկատուկի ճակատամարտից առաջ հնազանդության խոսք է տվել նաև մոնղոլներին: Դրա մասին ակնարկում է նաև Ղ. Ալիշանը՝ նշելով, որ 1243 թ. ոմն ասորի Սիմէոն երեց, որպես մոնղոլական դանի դեսպան, ժամանում է Սիս[7]: Մանրամասնությունները հայտնի չեն, սակայն այս այցը և կիլիկյան արքունիքի հնազանդության հավաստիացումներն են իրավունք վերապահել մոնղոլ բանախոսներին հիշեցնելու ընդամենը ամիսներ առաջ ձեռք բերված համաձայնությունը: Սուլթանի պատասխանը երկար սպասեցնել չտվեց. այս շրջանում է, որ հենց իկոնիացիների դրդմամբ Հեթումի դեմ ապստամբում է Լամբրոնի տեր, թագադիր իշխան Կոստանդինը: Կոստանդին Լամբրոնացու դժգոհությունն ուներ նախապատմություն: Վերջինս Հեթումի հետ կապված էր նաև ազգակցական կապով. նա հայոց արքայի հորաքրոջ որդին էր: Սակայն ազգակցական կապերը քաղաքական ինք-նուրույնության համար մղված պայքարում լամբրոնացիների համար որևէ կանխարգելիչ դեր չէին կատարում: Ինչպես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, Կոստանդինը մինչ այդ արդեն չէր ենթարկվում Հեթումին ու Կոստանդին պայլին և փաստացիորեն գտնվում էր Իկոնիայի սուլթանի հովանավորության ներքո: Դեռևս 1228

[6] Տարեգիրք Սմբատայ սպարապետի, Փարիզ, 1859, էջ 122:

[7] **Ղևոնդ Ալիշան**, Սիսուան, էջ 554:

թ. Լամբրոնի տերն արդեն հիշատակվում է որպես Իկոնիայի Ալայէդդին սուլթանի գործակից: Այդ թվականին իկոնիացիների՝ դեպի Կիլիկիա կատարած արշավանքին մասնակցում էր նաև Կոստանդինը: Ժամանակի ընթացքում արքունիքի և լամբրոնացիների միջև հակասությունները էլ ավելի էն սրվում: Հեթումը, փաստացիորեն զրկված լինելով ապստամբ իշխանին ծնկի բերելու հնարավորությունից, քանզի վերջինս գտնվում էր սուլթանության պաշտպանության ներքո, այդուհանդերձ, տարաբնույթ միջոցներով փորձում էր թուլացնել լամբրոնացիներին: Դա վերջիններիս հարկադրում էր այլ հովանավորներ ևս ձեռք բերել ի հաշիվ «ֆրանկների»: Ասվածի վկայությունն էր 1233 թ. Կոստանդին Լամբրոնացու կողմից Կովառա բերդի տրամադրումը Հիվանդախնամ ասպետների միաբանությանը: Ուստի պատահական չէր, որ 1237 թ. «Գրիգոր Թ (Հռոմի պապ, 1227-1241 թթ.- Թ. Դ.) գրէ առ Հեթում և առ հայրն, չնեղել զԿոստանդին Լամբրունեցի»[8]: Ուղիղ առճակատումը երկու կողմերի միջև այս շրջանում դադարել էր, սակայն բախման հնարավորությունը չէր վերացել: Շարունակելով ձևականորեն ընդունել սելջուկների գերիշխանությունը, այդուհանդերձ, արդեն 1230-ական թթ. վերջին հայոց արքունիքը կապեր է պահպանում մոտեցող մոնղոլների հետ: Այսպես, արդեն 1243 թ. Սիս է ժամանում մոնղոլների պատվիրակ ատրի Սիմէոն երեցը: Ցավոք հայտնի չեն բանակցությունների արդյունքները, սակայն դա, ըստ էության, ապագա դաշնակցային հարաբերությունների սկիզբն էր: Հատկանշական է, որ մոնղոլների պատվիրակության ժամանելու շրջանում, հավատարիմ մնալով դեռևս Ռուբինյաններին հատուկ կիլիկյան պետական համակարգի դիվանագիտական ճկունությանը, Կոստանդին պայլը մեկնում է Կեսարիա, սուլթանին իր դաշնակցային պարտավորությունների կատարումը հավաստելու համար: Օգտվելով հենց Քյոսեդաղի ճակատամարտում սելջուկների կրած պարտությունից՝ Հեթումը իր քաղաքական հակառակորդի դեմ անցնում է առավել վճռորոշ գործողությունների. «Իբրեւ փախեաւ սուլտանն հոռոմոց ի թաթարէն, արքայն զամենայն զիւղս և զանդաստանս Լամբրօնին արար ի ներքոյ հրամանաց իւրոց, և միայն մնաց նմա բերդն, որ ապստամբեալ էր»: Կոստանդինը փորձեց հաշտվել արքայի հետ: Ապստամբ իշխանը նույնիսկ առաջարկեց իր որդուն որպես պատանդ թողնել արքունիքում, բայց Հեթումը անդրդվելի էր. «Ապա գնացեալ Կոստանդնի ի Կօնն, առեալ զօրս սուլտանին հոռոմոց, որք յայնժամ թշնամիք էին արքայի, զի ետ զմայր սուլտանին հոռոմոց ի թաթարն… և մտեալ յաշխարհն՝ աւերեաց զբազում աւանս և զագարակս այրմամբ և սպանմամբ և գերութեամբ, զբազում քրիստոնեայս կոտորեալ և կողոպտեալ…»[9]: Ըստ Ղ. Ալիշանի, սկզբնական շրջանում հայոց արքան և պայլը գործադրել են ամեն հնարավորություն եղբայրասպան

[8] Նույն տեղում:

[9] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 288: Ըստ Սամուէլ Անեցու և Շարունակողի, անձամբ է ներխուժել Կիլիկիա հենց Ղիաս ադ Դինը (տե՛ս Սամուէլ Անեցի և Շարունակողներ, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոս-յանի, Ե., 2014, էջ 246):

հակադրությունից խուսափելու համար, բայց ապարդյուն. «..Իսկ նա (Կոստանդին Լամբրոնացին) յետ աւուրց ինչ՝ ըստ հայրենի սովորութեան իւրեանց՝ ապստամբեաց՝ ի քուերորդւոյ իւրոյ յարքայէ Հեթմոյ. և թէպէտ շատ ջանաց Կոստանդին հայր արքային, և ինքն իսկ արքայ, ոչ կարաց ածել զնա ի հաւանութիւն հնազանդութեան. զի ձեռն ետ նա ի սուլտանն Հոռոմոց. և այսպէս կայր նա ապստամբ»[10]: Արքային ի վերջո հաջողվում է ջարդել ապստամբ իշխանին և նրան միացած սելջուկ զորքերին: Ճնշելով խռովությունը՝ Հեթումը, այդուհանդերձ, հետևողական չեղավ հակառակորդին մինչև վերջ ծնկի բերելու հարցում. «…ապա (Կոստանդինը - Թ.Դ.) եմուտ յամրոց իւր և ոչ իշխէր համարձակիլ յաջ կամ յահեակ»[11]: Ապստամբ իշխանը փակվում է իր ամրոցի մեջ: Արքայի այս անհետևողականությունը, ըստ ամենայնի, պայմանավորված էր նաև այն բարդ իրադրությամբ, որը ձևավորվել էր պետության սահմանների մոտ: Բայց Կոստանդին Լամբրոնացու թշնամությունն այդքանով չսահմանափակվեց. 1245 թ. նա ևս մեկ անգամ փորձեց հայոց թագավորի աչալրջությունը. «…Քայ Խոսրով Շահն և ամէն տաճկունք, ժողովեաց հեծեալ, եւ առաջնորդութեամբ պարոն Կոստանդեայ Լամբրոնի՝ տիրոջն, մտաւ ընդ Պապառոնին լեառն ի վայր, ու այրեաց զամէնն: Եւ թագաւորահայրն պարոն Կոստանդին ու Սմբատ գունդստապլն եկին, մտան Տարսուս: …Թագաւորն հեծելովն ի հետ ել, եւ թագաւորահայրն եւ Սմբատ գունդստապլն, եւ հասին ի տեղ մի որ Մայծառ ասեն: Նա դարձան անթիւ շատ ի յետ մեք դիպաք ու Աստուծով խանգարեցաք. եւ կոտորելով վարեցաք ինչվի Պուտանդէ»[12]: Այս անգամ էլ, փաստորեն, ապստամբ իշխանը պարտություն է կրում: Ըստ ամենայնի, Կոստանդինը շարունակում է համագործակցությունը իկոնիացիների հետ ընդդեմ հայոց թագավորի նաև 1246-1247 թթ.: Սակայն Քեյ Խոսրով սուլթանի մահից հետո (1246 թ.) Իկոնիայի սելջուկյան պետությունը փաստացիորեն որպես տարածաշրջանային լուրջ գործոն թուլանում է՝ աստիճանաբար վերածվելով մոնղոլական հսկայածավալ կայսրության ծայրագավառի: Ճիշտ է, սուլթանական իշխանությունը այստեղ պահպանվում է, բայց իրական իշխանությունը գտնվում էր մոնղոլ տեղապահի ձեռքում: Եվ չնայած այն հանգամանքին, որ թե սելջուկները և թե հայոց թագավորությունը ընդունել էին մոնղոլ-ների գերիշխանությունը, այդուհանդերձ, բացի քաղաքական վերահսկողական գործառույթներից, որոնք խիստ տարբեր էին, էապես տարբերվում էր նաև մոնղոլների հարկային քաղաքականությունը: Մոնղոլական խանության ապա և իլխանության հանդեպ իկոնիացիների հարկային պարտավորություններն այնքան մեծ էին, որ տարածաշրջանը այդ ամենի հետևանքով տնտեսապես հյուծվում էր՝ ի տարբերություն Կիլիկյան թագավորության: Եթե դեռ 1243 թ. Հեթումը դրամ էր հատում իր և սուլթան Քեյ

---

[10] Ղևոնդ Ալիշան, *Սիսուան, էջ 84:*

[11] Կիրակոս Գանձակեցի, *էջ 288:*

[12] *Տարեգիրք* Սմբատայ սպարապետի, *էջ 123:*

Խոսրովի անվամբ, ապա Քյոսեդաղից կարճ ժամանակ անց՝ 1244 թ.[13], Հեթումն արդեն պատվիրակություն է ուղարկում Բաչու նոյինի մոտ, իր հպատակությունն հայտնելով մոնղոլական տերությանը: Հարկ է նշել նաև, որ սուլթանության գերակայությունն հաստատող դրամներ են հատվել ընդհուպ մինչև 1245 թ.: Դրամների վերաբերյալ հետաքրքիր մեկնաբանություն է տալիս Պ. Պտուկյանը՝ նշելով, որ գտնված դրամների փոքրաքանակությունը և խնամքով պատրաստված լինելը խոսում են այն մասին, որ դրանք լայն շրջանառության մեջ չեն եղել[14]: Չմերժելով այդ տեսակետը՝ այդուհանդերձ կարելի է կարծել, որ նման դրամների հատումը առավելապես բնորոշ է եղել 1240-ական թթ., ի մասնավորի Չմանկատունկի ճակատամարտի շրջանում և դրան հաջորդած կարճ ժամանակահատվածում: Հանգուցալուծումը Հեթումյան տոհմի երկու խմբավորումների միջև վրա է հասնում միայն 1250 թ., երբ Կոստանդինը հերթական ապստամբության փորձն էր նախապատրաստում: Ինչպես նշում է ժամանակագիրը, նա սպանվեց: Մանրամասները պահպանված չէն, սակայն կարելի է պնդել, որ նրա սպանությունը հայոց արքունիքի գործն էր: Կիլիկյան պետության պատմության ընթացում Լամբրոնի Հեթումյանների և արքայական իշխանության միջև մղված պայքարը ամենաերկարատևն ու ամենարյունահեղն էր, որն իր դրսևորումներն էր ստանում նաև արտաքին քաղաքական կողմնորոշումների առումով: Լամբրոնացիները, ողջ XII դ. ընթացքում հակադրվելով Ռուբինյաններին, ունեին ընդգծված հունամետ կողմնորոշում, այսինքն, տվյալ պարագայում բյուզանդական կայսրության ստորակարգության ներքո գտնվող քաղաքական ուժ էին՝ միևնույն ժամանակ լինելով այդ կայսրության ռազմաքաղաքական պատվարը տարածաշրջանում: XIII դ. առաջին կեսին այս տոհմը փոխում է իր կողմնորոշումը, տարածաշրջանում բյուզանդական ներկայությունը այլևս չկար և նման պայմաններում պատրոնաժի դերը ստանձնեց Իկոնիայի սուլթանությունը: Լամբրոնացիների ավելի քան մեկդարյա գործունեությունը ներծծված է հակապետական դրսևորումներով, բայց այն պետք է դիտարկել առաջին հերթին իշխանության համար մղվող պայքարով: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև Ղ. Ալիշանի այն ենթադրությունը, որ Կոստանդինը, հավանական է, ինքն էր տենչում արքայական իշխանության[15]: Ինչևէ, 1250 թ. վերջ է տրվում երկպառակության այդ հնագույն կենտրոնին: Ինքը՝ Հեթումը, խնդիրը վերջնականապես լուծելու համար խնամիական կապ է հաստատում Լամբրոնի Հեթումյանների հետ: Ի մասնավորի, գահաժառանգ

---

[13] *Անշուշտ, սա խոսում է այն մասին, որ Կիլիկյան պետությունը դեռևս շարունակում էր մնալ Իկոնիայի սուլթանության ուղղակի գերկայության ներքո. «Գերակայից կախված լինելու ամենաբարձր աստիճանն այն էր, երբ որևէ տիրակալ դրամ էր հատում սուլթանի անունից, ինչպես վարվում էին, օրինակ, Մարդինի Արտուքյանները և Սսի Ռուբինյանները»* (**Гордлевский В.** *Государство Сельджукидов Малой Азии, М.-Л., 1941, с. 82):*

[14] **Paul Z. Bedoukyan,** *Coinage of Clilician Armenia, New York, 1962, p. 84.*

[15] **Ղևոնդ Ալիշան,** *Սիսուան, էջ 85:*

Լևոնն ամուսնանում է Կոստանդին Լամբրոնացու դստեր՝ Կեռանի հետ: Հատկանշական է այն հանգամանքը, որ չնայած Լամբրոնացու կողմից արքայական կալվածքներում բազմիցս իրականացված ավարառուական արշավներին, թալանին ու կոտորածներին և այդ ամենի հետևանքով՝ նրա սպանությանը, այդուհանդերձ, այս իշխանի կերպարը կիլիկյան հիշատակություններում շարունակվում էր ներկայացվել դրական լույսի ներքո.

Դու Կոստանդեայ մեծ իշխանի
Արժանացեալ թագադրաւղի
Հայրազատաւք իւր պանծալի
Ընգալ ի լոյսդ անճառելի[16]:

Դառնալով մոնղոլների հետ հայոց արքունիքի փոխհարաբերություններին՝ նշենք, որ Հեթումը արագորեն կողմնորոշվեց Մերձավոր Արևելքում ձևավորված նոր ռազմաքաղաքական իրադրության պայմաններում. արդեն 1247 թ. Սմբատ գունդստաբլը մոնղոլների հետ բանակցելու նպատակով մեկնում է Կարակորում[17]. «Ի թուին 697 գնացի ես Սմբատ գունդստապլս ի Թաթարն. և ի թուին 699 դարձայ առ իմ եղբայրն Հեթում թագաւորն»[18]: Հեթումի այս քայլը ժամանակակիցների կողմից իրավամբ գնահատվել է որպես պետությունը և բնակչությունը փրկելու, հեռատես իմաստության դրսևորում. «Ի ժամանակս... Հեթմոյ... թաթարք, յելիցն արեւու մինչեւ ի Դամասկոս և ի մեծն Անտիոք և մինչեւ յԻկոնիա առին զտիեզերս յաւար և ի գերութիւն ասպատակաւ, և անխնայաբար ի սուր սուսերի մաշեն զամենայն ազգս և զազինս, և զայս ոչ եթէ ի միում ամի կամ յերկուս արարին և առնեն, այլ այս ԻԵ ամ է.... Արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ թագաւորին Հեթմոյ խորագէտ իմաստութեան և նախահոգակ հանճարեղութեան, մեք մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորր, զորոյ զկեանս և զթագուհւոյն սրբոյ և յաստուածապարգեւ զաւակաց իւրեանց..»[19]: Սմբատի այցելությանն արդեն հաջորդելու էր հայ-մոնղոլական դաշնակցային հարաբերությունների հաստատումը[20] և դրա լավագույն դրսևորումը՝ Հեթումի կատարած նշանավոր այցը Կարակորում: Ահա թե ինչ է նշել վերոգրյալ

---

[16] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Մաթևոսյան Ա., Ե., 1984, էջ 331:

[17] Հատկանշական է, որ Սամուէլ Անեցու Շարունակողի մոտ նշվում է 1246 թ., որն, ըստ ամենայնի, շփոթմունքի արդյունք է (Ս. Անեցի, էջ 247):

[18] Տարեգիրք **Սմբատայ սպարապետի,** էջ 124:

[19] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 233:

[20] Թեև այդ հարաբերությունները լիովին տեղավորվում էին գերակա-ստորակա ավատատիրական փոխհարաբերությունների տիրույթում, այդուհանդերձ, տուրք տալով նաև ավանդական դարձած բնորոշումներին, նախընտրում ենք այդ հարաբերություններն անվանել դաշնակցային:

փաստի մասին դարաշրջանի ականավոր հետազոտող Ռընե Գրուսեն. «Այն, ինչ Ռուբրուկը չընկալեց, Կիլիկիո Հայոց թագավորը կռահեց միանգամից: Այդ հմուտ միապետը, որը հասկացել էր մոնղոլների ներխուժման ողջ կարևորությունը խաչի և մահիկի պայքարում, համարձակորեն ընդունեց նրանց հովանավորությունը, որպեսզի կարողանա օգտվել նրանց պաշտպանությունից»[21]: Հարևան, երբեմնի գերակա տերության՝ Իկոնիայի սելջուկյան պետության քաղաքական ու տնտեսական փլուզումը դրական ազդեցություն ունեցավ հայոց թագավորության վրա, ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական առումով: Հարկ է նշել, որ գրեթե ամբողջ Մերձավոր Արևելքը, ի բացառյալ հայոց թագավորի տիրույթների, այս կամ այն կերպ ավերվեց մոնղոլ հրոսակների կողմից, կասեցվեց նաև այդ երկրների բնականոն զարգացման գործընթացը: Դրա շնորհիվ արդեն 1240-ական թթ., երբ սելջուկյան վտանգը կասեցված էր, իսկ մամլուքյանը դեռևս չէր հաջորդել, Կիլիկիան դարձավ ապահով ապաստան ոչ միայն Մեծ Հայքի ու հայաբնակ այլ տարածքների հայության, այլ նաև տարածաշրջանի մյուս ազգությունների բնակիչների համար: Տարածաշրջանի քրիստոնյա ազգաբնակչության համար այդ հարցում նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ հայոց թագավորությունը, փաստացիորեն քրիստոնյա միակ ապահով երկիրը լինելով հանդերձ, միակ իրական ուժն էր, որը մոնղոլների հովանավորությամբ կարող էր պայքարել «անհավատների» դեմ: Այդ ամենը հասցնելու էր ոչ միայն տնտեսական, այլ նաև ժողովրդագրական լուրջ առաջընթացի: XIII-XIV դդ. ֆրանսիացի ժամանակագիր Ժուանվիլը գրում է. «Միևնույն ժամանակ սպասվող մարտերի մասին Կիպրոսում այնպիսի ոգևորիչ լուրեր էին պտտվում, որ մեր զինվորներից ոմանք, հրապուրված կռվելու հնարավորությամբ և ավար ձեռք բերելու հույսով, գնացին Հայաստան, բայց նրանցից ոչ ոք այդպես էլ հետ չեկավ»[22]: Ամենևին էլ չափազանցություն չի լինի, եթե պնդենք, որ հատկապես XIII դ. երկրորդ կեսին կիլիկյան տնտեսության թռիչքաձև զարգացումը մեծ մասամբ պայմանավորված էր հենց վերոգրյալ երևույթներով: Այսպիսով, Կիլիկիան և ընդհանրապես մերձավորարևելյան տարածաշրջանը 1240-ական թթ. թևակոխում էր զարգացման նոր հեռանկարներ խոստացող մի շրջափուլ, որի պատմական նշանակությունը անմիջապես ընկալվեց հայոց թագավոր Հեթումի ու Կոստանդին թագավորահոր կողմից:

---

[21] **Գրուսե Ռ.,** *Պատմություն խաչակրաց, էջ 315:*

[22] **Տեր-Պետրոսյան Լ.,** *Խաչակիրները և հայերը, հ. Բ, Ե., 2007, էջ 302:*

ВНУТРИПОЛИТИЧЕСКОЕ И ВНЕШНЕПОЛИТИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ КИЛИКИЙСКОГО АРМЯНСКОГО ГОСУДАРСТВА В 1240-Е ГГ.

ТИНОЯН Д. Ф.

Резюме

Внутриполитическая и внешнеполитическая ситуация в Киликийском армянском государстве в 1240-е гг. была крайне нестабильной. Этот исторический отрезок был судьбоносным не только для Киликии, но и для всей Передней Азии. Армянской светской и духовной знати удалось с наименьшими потерями выйти из сложившейся тяжелейшей ситуации. Помимо этого царю Хетуму удалось не только обеспечить безопасность государства, но и превратить его в могущественное государство региона.

THE DOMESTIC AND FOREIGN POLITICAL SITUATION OF THE ARMENIAN KINGDOM OF CILICIA IN 1240'S.

D. TINOYAN

Abstract

The domestic and foreign political situation in the Armenian Kingdom of Cilicia was extremely unstable in 1240's. The period in question was fateful not only for Cilicia, but for the whole of Asia Minor. The Armenian secular and spiritual elite succeeded in getting out of the most severe situation with the fewest losses. Furthermore, the King Hethum was able both to ensure security of the state and to turn it into the most powerful realm in the region.